Հաշվետվություն

/Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի վերասոցիալականացման և վերականգնողական բաժնի փորձագետ Ալիկ Պետրոսյանի 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 17-ը աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ:/

Ես՝ Ալիկ Պետրոսյանս Պրոբացիայի ծառայությունում որպես փորձագետ ներգրավվել եմ ՀՀ ԱՆ գլխավոր քարտուղարի 2024 թվականի փետրվարի 29-ի **N 297-Ա** հրամանի համաձայն: 2024 թվականի մարտի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 17-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվություններ Պրոբացիայի ծառայությունում փորձաշրջանի մեջ գտնվող շահառուների, հարկ եղած դեպքում նաև նրանց ընտանիքի անդամների հետ /Երևանում և մարզերում/,
2. զեկույցների կազմման աշխատանքների կատարելագործման նպատակով տրամադրել եմ խորհրդատվություն,
3. իրականացրել եմ զեկույցների կազմման աշխատանքների շրջանակում քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների հետ խորհրդատվական առանձնազրույցներ,
4. ներկայացրել եմ Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և վերականգնման նպատակով միջոցառումների առաջարկներ,
5. աջակցություն եմ ցուցաբերել Պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովման գործընթացում,
6. մասնակցել եմ Պրոբացիայի ծառայության շահառուների կրթական և մասնագիտական կարիքների գնահատման աշխատանքներին,
7. ներգրավված եմ եղել որպես փորձագետ /հոգեբան-խորհրդատու/ ՄԱԿ-ի կողմից իրականացվող «Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և ընտանեկան բռնության» ծրագրի շրջանակում ձեռնարկի կազմման

աշխատանքներին, այդ ձեռնարկի հիման վրա և նույն ծրագրի շրջանակում իրականացրել եմ Պրոբացիայի ծառայողների և Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների վերապատրաստումը,

8. իրականացրել եմ շահառուների անձնական գործերի և հաշվառման քարտերի լրացման աշխատանքներ՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով,
9. վերասոցիալականացման և վերականգնողական բաժնի տարբեր աշխատանքների կազմակերպման համար մասնակցել եմ դատական նիստերի, կատարել եմ տնայցեր, իրականացրել շահառուների «Ռիսկերի և կարիքների» գնահատումներ, տարբեր համալսարաններից պրակտիկայի համար ուղղորդված ուսանողների համար վարել դասաժամեր,
10. մասնակցել եմ Պրոբացիայի ծառայության կողմից վերասոցիալականացման ծրագրերի շրջանակում իրականացվող «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղի և «Հանրօգուտ աշխատանքներ» ծրագրի մշակմանը, կազմակերպմանը և իրականացմանը /շահառուների ակտիվ ներգրավման, ընթացքի արդյունավետ անցկացման և արդյունքների օբյեկտիվ գնահատման աշխատանքներին/,
11. մասնակցել եմ «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակում Եվրոպայի խորհրդի, Պրոբացիայի ծառայության հետ համատեղ իրականացված եռօրյա սեմինար-դասընթացին՝ «Հմտությունների վրա հիմնված վերապատրաստում՝ վերանայված ռիսկերի և պահանջմունքների գնահատման գործիքի վերաբերյալ»,
12. ընդգրկված եմ ռիսկերի և պահանջմունքների գնահատման գործիքի կատարելագործման համար ստեղծված աշխատանքային խմբի մեջ:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի վերասոցիալականացման և վերականգնողական բաժնի փորձագետ՝ **Ալիկ Պետրոսյան**